

Բաղր. Զես գիտեր ինչ կ'ըսես, կնիկ, չես գիտեր:

Լուս. Վերջը...

Բաղր. Երթամ, ակուայիս մէկն ալ քաշեմ, խալլսիմ, մէկ-
երկու չարեկի տեղ մնաց միայն:

Լուս. Ականչս խլանար, երկու աչքս ալ լոս չունենար:
Կայ, գէշ տղայ:

ԹՂԱՆ

(Վերջը յաջորդ համարում)

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՅ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ *)

I

—Մամուլը հասարակական կեանքի հայելին է: Նա հա-
սարակական կեանքի անմիջական արդիւնքն է, նրա արտացո-
լումն է...

—Մամուլը հզօր զէնք է հասարակական կարծիք կազ-
մակերպելու, նրան այս կամ այն ուղղութիւնը տալու համար:
Ով իր ձեռքում ունի մամուլը, նա համարեա դիկտատորի իշ-
խանութիւն ունի մի երկրի վրայ...

—Մամուլը—այժմ եօթներորդ մեծ պետութիւնն է և
գուցէ աւելի աղղեցիկ միջազգային քաղաքականութեան մէջ,
քան միւս վեց պետութիւնների հոչակաւոր ներդաշնակութիւ-
նը... Մամուլը առաջադիմութեան ամենազօրեղ շարժիչն է:

—Մամուլը կապիտալի ներկայացուցիչների ծառայու-
թեան մէջ գտնուելով՝ զուտ մերկանտիլ (առևտրական) երկոյթ
է գարձել...

Այդպէս են այլազան և հակասական կարծիքները, որ դուք
կը լսէք պարբերական մամուլի մասին:

Այդ կարծիքներից մըն է արդարացի, մըն է պարունա-
կում ճշմարտութեան ամենամեծ մասը:

Մենք պատասխանում ենք. բոլորն էլ արդարացի են,
վճռականապէս բոլորը:

*) Սյոյ յօդուածը համառոտած փոխադրութիւն է «Периодическая печать
за Западом» զբանագիր մի յօդուածի, որի հեղինակը (Сатүриնъ) յայտնի
է Անդիքի մասին վրած իր մի քանի դրուածքներով:

— Սակայն այդ ի՞նչ էք ասում... Հօ չի կարող միևնոյն գործոնը լինել և հասարակական կեանքի արդիւնք և միաժամանակ հասարակական կարծիքի կազմակերպելու գործիք, այսինքն հասարակական կարծիքի ուղղիչ (դիրեկտոր): Չի կարող մամուլը լինել համ պրոգրեսսի (առաջադիմութեան) շարժիչ և միաժամանակ լինել մերկանտիլ և գոտուել կապիտալի մօտ ծառայութեան մէջ... Երկուսից մէկը. կամ նա հասարակական կեանքի այս կամ այն ուղղութեան պատճառ է, կամ այդ ուղղութեան հետեանք է, կամ—նա պրոգրեսսի շարժիչ է, կամ՝ կապիտալի սպասաւոր: Սակայն հօ չի կարող նա լինել և պատճառ և հետևանք, և առաջադիմական և յետադիմական ոյժ...»

— Ոչ, նա հէնց թէ մէկն է, թէ միւսը, թէ երրորդը, թէ չորրորդը...

Եթէ դուք կամենում էք որևէ երկրի մամուլը հասկանալ, եթէ դուք ձգուում էք որոշել նրա նշանակութիւնը, ուսումնասիրեցէք նրան կապակցութեամբ ամրող հասարակական կեանքի: Մամուլը հասարակական օրգանիզմի ջղային սիստեմն է: Նրա առողջ կամ հիւանդու դրութիւնը ուղղակի կամ կողմնակի կերպով արտացոլում է հասարակական մարմնի բոլոր միւս օրգանների գործունէութեան վրայ. բայց միևնոյն ժամանակ ինքը մամուլը սերտ կախում ունի հասարակական բոլոր օրգանների և դասակարգերի առողջ կամ հիւանդու դրութիւնից: Եւ ինչպէս որ բիոլոգիայում չէք կարող ուսումնասիրել ջղային սիստեմի զարգացման պատմութիւնը առանց որ զուգահեռաբար ծանօթանաք կենդանի օրգանիզմի էվոլյուցիայի հետ, նըմանապէս հասարակագիտութեան մէջ դուք չէք կարող ճշգրիտ գաղափար կազմել որոշ հասարակութեան մամուլի զարգացման մասին առանց որ զուգահեռաբար ծանօթանաք իրա հասարակութեան պատմութեան հետ:

Ահա թէ ինչու անզլիական մամուլի *) մեր համառու ուրուագծի մէջ մենք պէտք է բաւական տեղ տանք ծանօթացընելու առհասարակ անզլիական կեանքի և մասամբ այդ կեանքի նորագոյն պատմութեան հետ **),

II

Անզլիական պատմութեան խոր վերլուծութիւնը համու-

*) Ի նկատի ունենալով ինդրի ընդարձակութիւնը՝ այս յօդուածում մենք գործ ենք ունենալու զլաւարապէս խաղամական լրացրի հետ թողնելով ամսագրերը:

**) Այդ մասը մենք բաց ենք թողել,

զում է մեզ, որ ՏԻՄ դարի պատմութիւնը Անգլիայում ներկայացնում է հասարակական կեանքի բոլոր կողմերի կանոնաւոր և անընդհատ մի բարեշրջում, և որ այդ բարեշրջումը անշեղ ձգում է իրագործելու հաւասարութեան և արդարութեան այն բարձր իդէալները, որոնք այժմ գրուած են ամբողջ առաջադէմ եւրոպայի գրօշակի վրայ:

Անկասկած, վերջին տարիներս պարբերական մամուլի շիտակ օրգանների թիւը բաւական կրճատուել է: Անգլօ-բուէրական կոռուի առիթով իրանց ուղղութեան դաւաճանեցին այնպիսի լրագրներ, ինչպէս «Daily Chronicle», «Daily News», «Echo» *), և դրանց անցնելը չեմբերլենեան քաղաքականութեան կողմը տիտր փակտ է, որ միայն ցոյց է տալիս, թէ որչափ է ժամանակակից բուրժուազիան զգում իր կախումը աշխատող դասակարգերից: Հարիւր տարի առաջ տիրող դասակարգերը արտաքին քաղաքականութիւնը համարում էին իրանց առանձնաշնորհ սեփականութիւն, և նրանց մտքովն էլ չէր անցնի տեղեկանալ, թէ ինչ է մտածում ժողովուրդը այս կամ այն դիպումատիական ծանուցագրի մասին, արդեօք սա հաւանութիւն է տալիս այս կամ այն պատերազմական գործողութիւններին: Ժողովուրդն այն ժամանակ կարդալ չգիտէր, նոյնիսկ եթէ իմանար էլ—նրա համար գոյութիւն չունէին լրագրները: Մամուլի պատութիւնը գոյութիւն ունէր լոկ ունեոր դասակարգերի համար, նրանց համար, որոնք կարող էին վճարել 35 կոպ. լը-քագրի իւրաքանչիւր թուր համար: Թղթի և լրագրի վրայ դրած տուրքը թանգացնում էր հրատարակութիւնները և անմատչելի դարձնում մասսայի համար: 1855 և 1861 թուականին վերացուեցին այդ տուրքերը:

Այժմ ամեն մի բանուոր և երկրագործ Անգլիայում ստանում է իր ամենօրեայ և ամենշաբաթեայ լրագիրը, և գրագիտութիւնը՝ շնորհիւ 1870 թուականի դպրոցական օրէնքի դարձաւ ընդհանուր, և ժողովրդական կէս-պենսանոց (2 կոպ.) լրագիրը այժմ միլիոնաւոր օրինակներով է տպւում: Մասօթանանքը լրագրական գործի հետ Անգլիայում:

III

Առաւտեան ժամի հինգն է: Վիթխարի Լոնդոնը ծածկուած է անթափանցելի մշուշով և քնած է: Դեռևս կաթնավա-

*) Վերջին երկու լրագրները կրկն վերադարձել են զլադստոնեան արժատականութեան գիրկը:

ճառներն էլ չեն սկսել շրջել փողոցներով և իրանց զիլ Milk! (Կաթ, կաթ)-ով ականջ ծակել։ Իսկ մայրաքաղաքի կենտրոններում, Tudor Street, Fleet Street և նրանց կից փողոցներում, ուր վաղուց իւեր տեղաւորուել են լրագրների հսկայական գործարանները, ամբողջ գիշերը ոչ մի րոպէ կեանքն ու շարժումը կանգ չեն առել, իսկ առաւոտեան ժամը ծ-ին մօտ հասել են իրանց գագաթնակէտին։ Յոզնած գրաշարները վերջացրին վերջապէս իրանց ծանր «ցերեկուայ» աշխատանքը. նրանք խումբ-խումբ թողնում են տպարանները և ցրւում իրանց տըները։ Դրանց փոխարէն լրագրական փողոցները խուժեցին հազարաւոր ցրիչներ, մշակներ, սայլակներով, հեծանիւներով, աւտոմոբիլներով և այլն։

—Պատրաստ էլ.—լսում է թեթևացած հառաչը խմբագրատըներում, և խմբագրապեսները հաւաստիանալով՝ որ թերթի տպագրութիւնը վերջացրուած է, հագնում են իրանց վերնաըդգեստը և ցիլինդրը, նստում են կերի (կառը) և սլանում տուն, որպէսզի շուտով վայելեն իրանց կարճաւեև հանգստութիւնը։

Լրագրների ահագին հակեր դուրս են բերուում յուղարկիչ (էքսպերիցիոն) սենեակների դռներից և դարսւում սայլակների, աւտոմոբիլների վրայ, բաժանւում են հազարաւոր հեծանիւաւորների մէջ։ Լրագրական ծանրուցքը տասնեակ հազարաւոր պուգերով իսկոյն տարւում են բազմաթիւ երկաթուղային կայարանները, ուր այդ ծանրուցքները տեղափոխում են յատուկ գնացքներ, որոնք գլուխ շնորհնող արագութեամբ հասցընում են իրանց յանձնուած այդ տպագրական արտադրութիւնները երկրի զանազան ծայրերը։ Առաւոտեան ժամի 8—10 Անգլիայի կամ Շոտլանդիայի իւրաքանչիւր բնակիչ, ինչ կորած և հեռաւոր անկիւնում էլ ապրելիս լինի նա, հնարաւորութիւնունի գնելու մերձաւոր խանութում կամ ամենամօտ երկաթուղային կայարանում լոնդոնի որ լրագիրն և կամի, այն էլ նոյն գնով, ինչ գնով որ վաճառւում է հէնց լոնդոնում։ Նոյն առաւոտը արտասահմանի համար նշանակուած լրագրական ծանրուցքներն արագ գնացքներով հասցնուում են նաւահանգիստները, ուր արդէն նրանց սպասում են վիթխարի շոգենաւեր, որոնք տանում են նրանց եւրոպա և անդրովկիանեան երկրները։

Լոնդոնում հարիւրաւոր սայլակներ և հեծանիւաւորներ, իւրաքանչիւրը ստանալով յուղարկիչ գրասենեակում լրագրարական թերթերի իր բաժինը, թոշում են ահագին լոնդոնի բոլոր ծայրերը և բաժանում թերթերը լրագրական խանութներին («stationary»), որոնց թիւը մայրաքաղաքում մի քանի հազար՝ է։ Առաւոտեան ժամի 7-ին մօտ այդ խանութները պա-

Հող լրագրական գործակալաներն արդէն վերջացնում են ստացած լրագրների ջոկակումը և ուղարկում են իրանց ծառայող տը- ղաներին կամ աղջիկներին շրջակայ փողոցները լրագրների ծալքերով։ Այդ ցրիչները հասցնում են ձեր տուն այն լրագրնե- րը, որ դուք պատուիրել եք գործակալին, և ձեզ հասցնում են նոյն գնով, ինչ գնով վաճառում է հէնց լրագրի գրասենեա- կում։ Բաժանորդագրութիւնը անգլիական մամուլի մէջ համա- րեա չի գործադրուում։ Նա գոյութիւն ունի միայն քաղաքից շատ հեռու գտնուող կալուածների և արտասահմանեան ընթեր- ցողների համար։ Եւ բաժանորդագինը աւելի թանգ է քան հատով առնելլ, որովհետև տուաջին դէպքում խմբագրատան վը- բայ ընկնում է նաև պոստի ծախը։

Անգլիական լրագրները սովորութիւն ունեն առան- ձին խոշոր յայտարարութիւններ կացնել զանազան հրա- պարակական տեղերում և մանր-մունը լրագրական կըր- պակներում և այդ յայտարարութիւնների մէջ ընդգը- ծել լոյս տեսած համարի հետաքրքրական յօդուածները։ Այդպիսի ըեկլամների մէջ չափ ու սահման չգիտեն մանա- ւանդ կէս-պենսանոց (2 կոպ.) լրագրները, որ կարդացում են գլխաւորապէս աշխատող դասակարգից։ Այդ գնի առաւօտեան լրագրներ լոնդոնում երեք հատ են, երկուսը պահպանողական—«Daily Mail» և «Daily Express» և մէկը արմատական—«Morning Leader»։ Աւելի պակաս աներեսութեամբ են իրանց հոչակում մի պենսանոց (4 կոպ.) լրագրները, «ըրոնց թիւը լոնդոնում վեց է (բացառապէս ամենօրեայ քաղաքական օրգանների մասին է մեր խօսքը)։ Երկու պահպանողական—«Daily News» և «Daily Chronicle», երկուսը պահպանողական—«Morning Post» և «Stan- დար» և երկուսը «անկախ»—«Daily Telegraph» և «Daily Graphic» (պատկերազարդ)։ Վերջապէս լրագրական աշխարհի թագուհին —«Times» («Թայմզ»), որ արժէ երեք պենս (12 կոպ.), բոլորո- վին չի զետեղում իր ըեկլամային ազդերը (ափել) մանը լրա- գրական խանութներում։ Նրան կարդում են միայն փողային, գրական և տոհմային արիստոիկրատիկայի ներկայացուցիչները։

Կէսօրից յետոյ էլ մէկը միւսի յետեկից սկսում են լոյս տեսնել լոնդոնի իննը երեկոյաթերթերը—«Globe», «St. James Gazette», «Pall-Mall-Gazette», «Evening Standard», «Evening News», «Sun», «Westminster Gazette», «Star», «Echo»։ Միայն վերջին երեքը պահպական ուղղութեան են պատկանում, իսկ միւսները—պահպանողական են։ Նոյն ձևով արագ տարած- ում են երեկոյաթերթերը։

Գաղափար տալու համար անգլիական լրագրների տարած-

ման աստիճանի մասին՝ մենք կը բերենք մի քանի մօտաւորական թուեր. «Times» տարածւում է 100,000 օրինակից աւելի. «Daily Chronicle»—մօտաւորապէս 150,000 օրինակ. «Daily Telegraph» 250,000-ից աւելի. նոյնքան և «Standard» և Morning Post». իսկ «Daily News» 300,000-ից աւելի է ծախւում. «Daily-Mail», երկկողութէկանոց լրագիրը, որ հիմնուած է 1896 թ., հէնց լոյս տեսնելու առաջին ամսում 171,000 օրինակ էր ծախւում. «Daily-Mail» անգլօ-բոէրական պատերազմի ժամանակ 1.250,000 օրինակից աւելի էր վաճառում, իսկ վերջին տարին, երբ սկսեց լոյս տեսնել նրա մրցակից նոյնակէս երկկողութէկանոց «Daily Express»-ը—այն ժամանակ «Daily-Mail»-ն սկսեց աւելի պակաս թուով ցրուել, 700—800,000 օրինակ: «Daily Express»-ի հիմնադիր Պիրսոնի ասելով 1.500,000 օրինակ էր սկզբի օրերի պահանջը: «Morning Leader» տարածւում է 300,000 օրինակ: Ամենաբարեայ քաղաքական լրագրներն ևս միլլիոնաչափ են տարածւում. այդպէս օրինակ «Lloyd's Newspaper», «Encyclopedia Britannica»:

Տ.

(Վերջը յաջորդ համարում)

Թ. ՄՈՄԶԵՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ *,

III

Յեզարիզմի պաշտամունքը

Այս երկու բառով կարելի է բնորոշել քաղաքական այն հոսանքը, որ տիրապետող է հանդիսանուած Գերմանիայում անցեալ դարի կեսից և որ համարւում է Բիսմարկից մնացած ժառանգութիւն: Բիսմարկ... ահա բողոքող ազատամտութեան համար նշաւակութեան պատրաստ մի դէմք. պարսաւանքն ու վրէժինդրութիւնը, ինչպէս և փառքն ու մեծութիւնը պարփակելու համար մարդկային միտքը սովորաբար, խոշոր ընդհանրացումներից դիմում է դէպի անհատները. բազմութեան արածը մի հատիկ պատկերի մէջ տեղաւորելու ձգտումը միշտ

*.) 85ս «Մուլճ», № 2.